ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ալամդարյանը XIX դ. առաջին երեսնամյակի քնարական բանաստեղծության առաջին, խոշոր ներկայացուցիչն է։ Ժամանակի գրարարալեզու բանաստեղծներից նա առանձնանում է իր յուրահատուկ դերով։

Ալամդարյան-քնարերգակի ուշադրության կենտրոնում մարդն է։ Նա խորհում է մարդու մասին, թափանցում մարդու ներաշխարհը և երևութականացնում նրա տառապանքն ու սերը... Այս ամենն, իհարկե, բանաստեղծության համար նորություններ չէին։ Միջնադարը արդեն հարուստ էր քնարերգությամբ, բայց Ալամդարյանը դարասկզբի հայ բանաստեղծության մեջ քնարական իր խոսքը, իր ուրույն արվեստը բերեց։ Նա չի կրկնում, այլ իր ժամանակի գրաբար բանաստեղծության մեջ սիրտ ու հոգի է դնում՝ հեռու արհեստականությունից, վերացականությունից, չորությունից։

Ալամդարյանի քնարն ուժգնորեն հնչեցրել է սիրո մոտիվը։ Նրա երգերում վերարտադրվածը ջերմորեն սիրած էակի մահվան վիշտն է, նրա տառապանքն ու մորմոքը, սիրո ողբերգությունը։ Խոր ապրած այդ վիշտը համակում է ընթերցողին, որը բանաստեղծի անձնական վիշտն ընկալում է իբրև առհասարակ սիրո, տառապանքի համամարդկային զգացում։ Անձնականը, մասնավորը դառնում է ընդհանրական, հասարակական։ Դա էլ հենց քնարերգության էական հատկությունն է, նրա բուն խնդիրը։

Եթե Պետրարկան Լաուրայի սիրո վայելքը երգելուց հետո՝ կորցնելով նրան, ողբում է իր սիրո կորուստը (Լաուրայի մահը), ապա Ալամդարյանը հենց ողբով է սկսում իր սիրո երգը։ Իր երգերում Ալամդարյանը վերապրում է կորցրած սիրո և իր նազելու հետ անցկացրած օրերի հուշերը միայն, իսկ ապրած սիրո վայելքի երգը չկա։ Այս առումով նա բացառիկ ստեղծագործող է։

Սիրելիի մահը այնքան խորն է ցնցել նրա հոգին, վիշտն այնպես է համակել նրան, որ կյանքն ամբողջովին, երևույթները, մարդիկ կորցրել են իրենց նշանակությունն ու իմաստը։ Բանաստեղծն իր շրջապատին, ընդհանրապես կյանքին նայում է միայն իր վշտահար սրտի հայացքով, հուսահատ հոգու զգացողությամբ.

Այդ զի՞նչ կսկիծ է, այդ զի՞նչ չար տանջանք,
Քարեայ սիրտ պիտի հանդուրժել դոցա։
Թէ լուր ինչ չունիք զանգին չքնաղէս,
Թէ ինձ չիք հնար գտանել զնա՝
Ինձ յափսոս եկայք անչափ նեղելոյս,
Ողջ ողջ դի՛ք յարգանդ մութ գերեզմանի[1]։

---

1 *Ցարութիւն վարդապետի Ալամդարեանց, Չափաբերականք, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 6։*

Բանաստեղծը ոչ մի կերպ չի կարողանում հաշտվել կատարվածի հետ։ Նա ըմբոստանում է ճակատագրի դեմ և սփոփանք որոնում մահվան մեջ։

Մահվան դեմ և դեպի մահ, այս է Ալամդարյան-բանաստեղծի եզրահանգումը։ Եթե դու կյանք չես վերադառնում, ասում է նա իր սիրուհուն, ապա տար ինձ քեզ մոտ.

Առանց քո ես զամ, ամիս օր,
Անցուցանեմ միշտ գլխակոր.
Դժգոյն դիմօք, սրտիւ տխուր
Մաշեմ զկեանս հանապազօր.
Թէ քեզ առ իս գալ չէ հնար՝
Գոնեա առ քեզ զիս փութով տար.
Հեռի ի քէն չունիմ դադար.
Կեանք այդպիսի քան մահ է չար[2]։

Նմանօրինակ տրամադրություններ է վերարտադրում նաև «Կոծ» քերթվածքը։ Միջնադարյան ողբասացների նման նա մռնչում է, հեծում կորստի ցավից. աղերսում է ամենքին «կականաբարձ» ողբալ իրեն, չխնայել, կենդանի թաղել...

Սիրած էակի կորստյան առթիվ ողբ, տառապանք, ցավ ու կսկիծ, ապա բողոք, անեծք, ըմբոստություն չար մահվան դեմ և այդ բոլորից դուրս գալու ելքը՝ դեպի անէությունը, դեպի մահ,— «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» բանաստեղծության գաղափարն ևս այդ է.

Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք՝ ձայնիւ սրգալի
Խնդրեցից գնա յամենայն երկրի[3]։

Բանաստեղծը մերթ ելք է որոնում սիրած կնոջը մահվան ճանկերից խլելու, աղաչում է, որ նա ետ դառնա դեպի կյանք, իր մոտ. «Զիմ սուգ արդ տես, փոյթ դարձ առ իս»,— մերթ ինքն է թևածում դեպի մահը։ Նա շարունակում է իր դառը հեծեծանքը՝ իր վշտին մասնակից դարձնելով բնությանը։ «Եթե մահաբեր սլաքը» խոցել է իր սիրտը և եթե իր չքնաղատես Մարգարիտը «անդարձ» գնացել է, ապա իր կորուստը թող ողբան ողջ տիեզերքը, բնությունը, մարդիկ, թռչունները։ Թո՛ղ ողջ աշխարհը վշտակցի իրեն, թերևս դրանով թեթևանա իր տառապանքը.

Պատմեցէ՛ք մարդիկ, թէ տեսիք զնա,
Պատմեցէ՛ք, եղբարք, թէ կայ սիրտ ի ձեզ[4]։

Բանաստեղծը մեղմորեն նախատում է երկնքի թռչուններին, թռչունների պարծանք տատրակին, խնդրելով դադարեցնել խրախճանքը և կարեկից դառնալ իր ցավերին.

---

2 Նույն տեղում, էջ 9։
3 Նույն տեղում, էջ 15։
4 Նույն տեղում, էջ 6։

Ուրախ ձայնիւ մի՛ դայլայլեր,
Ձայրուոյս այրած սիրտ մի՛ ճմլեր, ո՜հ
զվերս մի՛ նորոգեր.
Լերդակիզոյս զուգերգող լեր,
Դու լաւ գիտես, թէ զինչ է սեր. վա՜յ ինձ,
հուր վառէ սեր[5]։

«Դու լաւ գիտես, թէ զինչ է սեր...»,— հենց այստեղ բացահայտվում է Ալամդարյանի սիրո ողբերգության մի այլ գիծը։ Նա բացատրում է ընթերցողին, թե ինչ է կորցրել ինքը և ինչու է ողբում այդքան ուժգին։

Բանաստեղծի սիրո ողբերգության մեջ ակնհայտ են նաև այդ ողբերգության պատճառները, պատասխանն այն հարցի, թե ինչո՞ւ է մահվան մեջ փընտրում ելքը, թե ո՞րն է նրա հուսահատության հիմքը և կամ թե ո՞վ և ի՞նչ՝ կորցրած սերը։

Առաջինը սիրող էակների հոգեկան միասնության, անքակտելի միության գաղափարն է։ Նրանց միավորում է մի հոգի, մի միտք, մի զգացմունք։ Ահա թե ինչու, բանաստեղծը կորցնելով իր սիրուհուն, կորցրած է համարում նաև իրեն.

Դուք ի զուր ջանայք զիս մխիթարել.
Ձկայ կէս սրտիս՝ զի՞արդ ապրեցայց։
Իմ կեանք այլ չեն կեանք, առանց փարելոյս.
Իմ ցաւոյս դեղն է մահն, սիրելիք[6]։

Սիրող զույգի միությունը մեծ խորհուրդ ունի, նրանք ուխտել են ապրել և մեռնել միասին, առանց մեկի մյուսի կյանքն անիմաստ է։ Փոխադարձ, իմաստավորված է նրանց սերը, անքակտելի հոգեկան դաշինքը.

Ա՜խ անմոռա՛ց կեանք, հոգի, սէր,
Այդպէս երբէք չէր պայման մեր.
Կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ
Ի միասին՝ խոստումն էր մեր[7]։

Սիրո գովքի և մեծարանքի, կրքոտ, ջերմ ու հորդառատ զգացմունքների արտահայտության օրինակներ շատ կան հայ միջնադարյան բանաստեղծների երգերում։ Սակայն Ալամդարյանի սիրո քնարերգությունը հատկանշվում է նախ հոգեբանական խորությամբ և ապա, որ նվազ կարևոր չէ, կնոջը, սիրուհուն նա գնահատում և արժեքավորում է իբրև կյանքի ընկեր, «հոգու պատկեր», «մտքի հանճար»։ Կորցնել սիրած էակին՝ նշանակում է զրկվել հոգուց և դադարել իբրև բանական, գործող, ապրող, մտածող անհատ գոյություն ունենալուց և կյանքն անցկացնել լացով և աղի արտասուքով.

---

5 Նույն տեղում, էջ 7։
6 Նույն տեղում, էջ 6։
7 Նույն տեղում, էջ 9։

Զի՛ք չափ հեղման դառն արտասուաց
Ցիմոց պղտոր միշտ թաց աչաց.
Լեղի՛ իմ ջուր, մոխի՛ր է հաց,
Նինջ իմ՝ պատկեր զարհուրանաց.
Հոգւով մարմնով կամ սևազգեաց,
Կամաւ զրկեալ յամէն բարեաց.
Ո՞չ տեսանես, զի այդպես կեանք.
Դառն է քան բիւր չար կատարած[8]։

Ալամդարյանը քնարական զեղումներով է բնութագրում իր սերը, իբրև բարձրագույն, անսահման, անընդգրկելի, անբիծ ու անարատ, վեհ ու նվիրական, անթաքուստ մի զգացմունք, որի պատճառած ցավերն անգամ քաղցր են.

Անթաքուստ է սէր, քաղցր են վէրք նորա,
Սիրահար սրտի սէրն է անթեղայ։
Մի թոյնն է դեղթափ երկրորդեալ թունոյ,
Իսկ սէրն առաջին՝ է խոշ միւս սիրոյ[9]։

Աներևակայելի, անհուն սիրո զգացմունքը Ալամդարյանի մոտ հասնում է սիրո պաշտամունքի, իսկ սիրո կորուստը ոչ թե տխուր դիպված է, այլ ահավոր երևույթ, անշիջանելի կրակ, որ հրդեհում է բանաստեղծի հոգին, բորբոքվում և ժայթքում ինչպես հրաբար։

Դադարել է նրա սիրած կնոջ՝ Մարգարիտի երկրային կյանքը, բայց բանաստեղծի երևակայության մեջ շարունակում է կենդանի շնչել նրա կախարդական պատկերը՝ կենդանի ու շարժուն, մեղմ ու համեստ, քնքուշ ու առաքինող, անթերի ու կատարյալ որպես բնության հրաշագործ կերտվածք։ Հասակը բարեձև ու շնորհաշուք, գլուխը ոսկեփայլ «գանգրահեր վարսեօք», լուսափայլ ճակատով «յօնք իւր աղեղունք նետարձակ մարգկան», հոգու պարկեշտությունը, մտքի հանճարը դեմքին դրոշմված, այտերն ինչպես բացված վարդեր, ատամնաշարը նման մարգարտի, «քաղցրալեզու», «գեղեցկախօս», «ձայնն հրեշտակի», ահա թե ինչպիսին է Մարգարիտը.

Նազելոյս դէմքն էր ճերմակ ու կարմիր,
Հրաշագեղ, չքնաղ, աննման ումէք։
Շնորհաշուք հասակն չէ՛ր երկայն կամ ցած,
Միջակ ու քնքուշ՝ զարմանք տեսողաց։
Գլուխն էր պճնազարդ ոսկեփայլ վարսիւք.
Հիւս նոցա այրէր զաչս անզգաստից[10]։

«Պարերգութիւն» բանաստեղծությունը գրված է կնոջ մահվան անմիջական տպավորության տակ։ Այստեղ այնքան կենդանի ու երկրային է սիրած էակի պատկերը, որ թվում է, թե բանաստեղծը կերտել է այն նշանախոսության

8 Նույն տեղում, էջ 10։
9 Նույն տեղում, էջ 56։
10 Նույն տեղում, էջ 5։

անմիջական ներշնչանքով, մինչդեռ դա անհուն սգի մեջ տառապած մարդու վերհուշն է միայն, քաղցր օրերի հիշատակների լոկ վերապրումը.

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ, դարձայ քար.
Այն զի՛նչ օր էր և զի՛նչ ժամ,
Ցորում տեսի ես կեանք նոր...[11]

Ալամդարյանի սիրո քնարը, որ միշտ հեծեծում է, ողբում («Ողբերգութիւն Իսրայելի», «Կոծ», «Սուգ», «Դաւ երևակայութեան», «Գարուն» և այլն), այնուամենայնիվ ունի նաև երաղանքի, հույսի լար։ Թեև վերջինս բեկբեկուն է, թույլ ու հաճախ էլ խորհրդապաշտական երանգով, բայց, ի վերջո, արտահայտում է բանաստեղծի տողերում թաքնված կենսասիրությունը։ Նա մի պահ համակերպվում է վշտին, նույնիսկ նախատում իրեն՝ թուլասրտության համար և, ի վերջո, իր հույսը կապում «փրկալից խաչի» հետ։

Դա ոչ թե սոսկ հավատացյալի երկյուղածությունն է և կամ հավատը, թե նրա սիրուհին վերստին կյանք պիտի ունենա հանդերձյալ աշխարհում, այլ յուրօրինակ արտահայտությունը կենսազգացության, որ առկա է Ալամդարյանի հոգում և որը դրսևորվել է նաև նրա մյուս բանաստեղծություններում։

Ալամդարյանի սիրային քերթվածների մեջ առանձին շարք են կազմում վարդին ու սոխակին նվիրված երգերը՝ «Սոխակ ի հոգեվարս», «Վարդակորոյս», «Կովկովանք վարդի», «Թշվառութիւն սոխակի», որոնք յուրօրինակ արձագանք են միջնադարում արևելքի ժողովուրդների մոտ լայն տարածում գտած վարդի և սոխակի այլաբանության։ Սոխակը սիրահար բանաստեղծն է, վարդը՝ նրա սիրո առարկան։ Ինչպես սիրուհու մահով բանաստեղծի կյանքն է անիմաստ դառնում, և նա ոչ մի ափոփանք չի գտնում, այնպես էլ սոխակը, կորցնելով վարդին, այգին անապատ և ավերակ է տեսնում ու սգում, ողբում է նրա կորուստը։

Քանի առ թուի վարդին
Մերձենայր մօտէր՝
Այնքան ցնորէր, քրտնէր և սարսէր...[12]

Այս բանաստեղծություններում ևս Ալամդարյանն ամբողջովին ինքն է, իր ապրած ողբերգությամբ, կսկիծով ու տառապանքով, միայն թե այլ պատկերների, համեմատությունների ու ձևերի մեջ դրսևորված։

Ալամդարյանի վարդի ու սոխակի երգերը քնարական նորատիպ շինվածք ունեն։ Դրանք ընդհանուր, հեռավոր ազդեցության արտահայտություններ լինելով, ցույց են տալիս, թե որքան թարմ են, որքան նորաձև՝ միջնադարում շատ տարածված այդ մոտիվի ալամդարյանական մշակումները։ Այս առումով առանձնապես հաջող է կառուցված «Կովկովանք վարդի» բանաստեղծությունը։ Իր սիրած էակին ներկայացնելով իբրև վարդ և գովերգելով նրա պերճախոսությունն ու գեղեցկությունը, բանաստեղծն աղերսում է բնությանը կյանք ու զորություն տալ և՛ իրեն, և՛ իր վարդին։ Առավոտը լույս տա նրան, լուսինը՝

11 Նույն տեղում, էջ 13։
12 Նույն տեղում, էջ 11։

«շող պանծագին», արևը՝ ջերմություն, քանզի սգավոր բանաստեղծը, կորցնելով իր սիրուհուն, զրկվել է այդ բոլորից.

Արև բարերար, զվարդն իմ ջեռո՛,
Նախածագ լուսովդ, եռանդեամբ լցո՛, զարթո՛, փայլեցո՛.
Բակէրտ է, չքնաղ, գիրգ, ջինջ ծով սիրոյ,
Արժանի շողոյդ ջեր գթոյ, լուսոյ, մաքուր ի տապոյ[13]։

Տառապանք սիրած էակի կորստյան առթիվ և ակնկալություն նրան գտնելու համար, բնության ստեղծագործ ուժի օգնությամբ կորցրածը ետ բերելու կենսական հույս՝ այս է Ալամդարյանի վարդի ու սոխակի երգերի էությունը։ Եվ չնայած այս բանաստեղծությունների բովանդակությունն էլ սիրո ողբերգությունն է, տառապանքը, սակայն այլ են տրամադրությունները, երանգները, պատկերները։

«Վարդակորոյս» բանաստեղծության մեջ սոխակը, որ մարմնավորում է բանաստեղծին, ավելի հուսահատ է։ Այն գրված է 1831 թ. հաղպատյան աքսորի օրերին, որն իր յուրօրինակ կնիքն է թողել բանաստեղծության վրա։ Թեև բնությունը կենդանանում է, կյանքը վերածնվում, բայց բանաստեղծ-Ալամդարյանը միայնակ է, ոչինչ լավ չի տեսնում իր շուրջը, իր կյանքի լուսաբացի ոչ մի հույս չի նշմարում... բնությունը չի խոսում նրա սրտի հետ, չի կարեկցում նրան, վշտահար բանաստեղծի և վերածաղկած բնության միջև մեծ է անդունդը։

Ալամդարյանի սիրո քնարերգության լավագույն նմուշներից է «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» բանաստեղծությունը։ Սա դրամատիզմով հագեցված անզուգական ստեղծագործություն է, որ բացառիկ տեղ ունի դարասկզբի հայ դասական բանաստեղծության մեջ։ Արդարացի լինելու համար հիշենք, որ այսօրինակ բանաստեղծություններ ունեն նաև միջնադարի մեր առանձին քերթողներ, սակայն բոլորն էլ նվիրված Քրիստոսի խաչելությանը։ Ալամդարյանն իր «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» երգով հանգում է նոր արդյունքների։ Հուսահատ հայրը զրուցում է սիրասուն զավակների հետ և նրանց առջև բացում իր վշտահար սիրտը։ Վշտաբեկ որբերն իրենց միակ ապավենի՝ սիրելի հոր հեռանալու լուրն իմանալով, թախանձում են նրան՝ ետ կանգնելու այդ մտքից.

Հայր մեր, ես գիտեմ, ըզմայր մեր ողբայ,
Զմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սրգայ,
Ե՞րբ սա մոռացի զանուն, զկերպ նորա,
Ե՞րբ հանգիստ տեսցուք մեք զհոգի սորա[14]։

Ալամդարյանի քնարերգությունը չի սահմանափակվում միայն սիրո թեմատիկայով։ Նա գրել է նաև ազգային, հասարակական, բարոյագիտական, ազգասիրական խոհեր արտահայտող բանաստեղծություններ և կրոնական երգեր։

Սակայն նրա «Աղօթք», «Աղերս առ ամենաօրհնեալ տիրամայրն», «Յորդորակ առ ուխտաւորն», «Կողկողանք առ խաչ Փրկչին», «Աղերս առ նախավկայ

---

13 Նույն տեղում, էջ 30։
14 Նույն տեղում, էջ 16։

ամլորդին», «Սաղմոս Ծե», «Սաղմոս ՃԼԹ», «Բանք մեր խաչելոյն» կրոնական բանաստեղծությունները ներշնչված են ոչ թե քրիստոնեական հավատքին կուրորեն ծառայելու պահանջից և հայ եկեղեցու հավատարիմ սպասավորը լինելու պարտավորությունից, այլ առտնին կյանքից, դրված են իրականության թելադրանքով։ Ալամդարյանը բանաստեղծ և մանկավարժ լինելուց բացի նաև հոգևոր գործիչ էր (քահանա, ապա վարդապետ), սակայն նրա կրոնական երգերում տիրապետողը աշխարհիկ մարդու հույզերն ու ապրումներն են։

Հիշյալ բանաստեղծությունները ներքին տրամաբանությամբ և ներշնչանքի ուժով սերտորեն կապված են Ալամդարյանի մյուս երգերի հետ։ Տարբեր են հարցերը, հերոսները, թեմաները, բայց բանաստեղծի հայացքը կյանքի և աշխարհի մասին նույնն է։ Այստեղ էլ հիմնականում նույն թախծող, վշտացող, բողոքող բանաստեղծն է։ Եթե սիրո բանաստեղծությունների հիմնական բովանդակությունը սերն է, նրա կորստի վիշտն ու մորմոքը, ապա կրոնական երգերը հալածական բանաստեղծի տրամադրությունների ուրույն արտահայտություններն են, կրոնական շղարշով, պատկերներով, ավանդական արտահայտություններով համեմված։ Այսպես, օրինակ, «Ողբերգություն Իսրայելի» բանաստեղծությունը մի սրտառուչ պատմություն է, ուր թեև ներկայացված է բիբլիական Հակոբի անձնական ողբերգությունը, միակ որդու՝ Հովսեփի մահվան առթիվ, բայց իրական շնչով գրված մի աշխարհիկ երգ է, ուր հոգեբանական համոգիչ գծերով ներկայացվում է որդեկորույս հոր կենդանի կերպարը։ Գաբրիել Պատկանյանը վկայում է, որ այդ երգի հորինման շարժառիթը եղել է Ալամդարյանի որդու՝ պատանի Հովսեփի մահը[15]։

Մայրական սիրո, մայրական վշտին նվիրված շատ երգեր են մեղ հայտնի հայ քնարերգության մեջ, սակայն հայրական սիրո, հայրական հոգու տառապանքները արտահայտող քնարական ստեղծագործություն առաջինը ներկայացնում է Ալամդարյանը։ Ի դեմս ծերունի Հակոբի, մենք ունենք որդու կորուստը սգացող, սիրող ու տառապող հոր քնարական կերպար.

Չէ՛ նա վատաբաղդ, որ վաղ մեռանի,
Այլ որ յետ մահու սիրելոյն ապրի,
Արդ կեանք իմ մահ է, մահ՝ կեանք ցանկալի.
Փափագիմ դնիլ յորովայն շիրմի[16]։

«Սաղմոս Ծե» խորագրով քնարական բանաստեղծության մեջ Ալամդարյանը բողոքում է հանրային կյանքում տիրող անարդարությունների դեմ, ջատագովում ազնիվ և ընդհանուրի գործին նվիրված մարդկանց, վերարտադրում նրանց հոգեբանության բնորոշ գծերը։ Պիտի կարծել, որ այստեղ բանաստեղծը ի նկատի ունի առավելապես հենց իր՝ որոգայթներով լի կյանքը և այն տանջալից օրերը, որ նա անց է կացրել Մոսկվայում ու Թիֆլիսում, Հաղպատում կամ Նոր Նախիջևանում։ Արդարամիտ, ազնիվ, ճշմարտասեր մարդու բողոքի ձայնն է դա, որ ներկա դեպքում լսվում է ոչ թե նամակներից, այլ քնարական ընդհանրացված խոսքի մեջ։

Նմանօրինակ տրամադրությունների արձագանք է նաև «Սաղմոս ՃԼԹ» խորագրով բանաստեղծությունը, որով Ալամդարյանը պայքարում է իր գաղա-

15 Գ. Պատկանյան, անտիպ հիշատակարան, ԳԱԹ, Գ. Պատկանյանի արխիվ, № 1։
16 Յարություն վարդապետի Ալամդարեանց, Ջափաբերականք, էջ 45։

փարական հակառակորդների դեմ։ Պարզորոշ ներկայացնելով իր ծանր կացությունը, նա հիշեցնում է իր շուրջը վխտացող չարակամ մարդկանց արարքները, մարդիկ, որոնք շարունակ թակարդ են լարում և դավադրություններով ձգտում անհետ կորստյան մատնել իրեն, նա թախանձում է Աստծուն՝ հեռու պահել իրեն թշնամիների չարությունից.

Ապրեցո՛ զիս, Տէր, ի մարդոյ չարէ,
Ջերծո՛ զիս, փրկեա յանիրաւ առնէ.
Սիրտ նորա է վիհ խորհրդոց չարաց,
Վիճի և կռուոց, նենգոտ խարանաց...
Խափանել խորհի նա զգնացս իմ բարի,
Գաղտ որոգայթել զանձն իմ դարանի.
Թակարդ հնարի՝ գայթ ոտից իմոց,
Շուրջ զինև դնէ զանթիւ հաղբ դաւոց[17]։

Ալամդարյանը բողոքում է ողբագին, թախանձում արտասվախառն։ Սակայն որքան էլ որ նա դառնացած է կյանքից, այնուամենայնիվ ապրել է ուզում և ոչ թե մեռնել կամ զոհ դառնալ հակառակորդների դիվական պայքարին։ Եթե մի շարք բանաստեղծություններում նա, խորապես հուսահատված, փրկությունը մահվան մեջ է տեսնում և հուսո թույլ ճիչեր արձակում, ապա այստեղ հաստատորեն գոչում է. «Ապրեցո՛ զիս»։ Բանաստեղծն սկսում է հաղթահարել անձնական վիշտը, հոգեկան ճգնաժամից դուրս գալ, պայքարել իր թշնամիների դեմ ու հաղթել։ «Կողկողանք առ խաչ Փրկչին» բանաստեղծության մեջ նա դարձյալ իր հակառակորդների լարած որոգայթների մասին է խոսում. որոնք շրջապատել են իրեն ծննդյան օրից.

Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,
Յո՛ և գնացի՝ միշտ գտի դարան.
Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ զերծայ։
Առ դրան տաճարիդ արդ կամ գետնամած,
Հայցեմ զօգնութիւն խաչիդ պարծանաց.
Յիս գթա՛, խնայեա՛, գանհուն վէրս իմ բժշկեա[18]։

Ալամդարյանի աշխարհայացքն ավելի բուռն ու անսքող դրսևորվել է նրա ազատասիրական, հայրենասիրական բանաստեղծություններում, ինչպիսիք են՝ «Տաղաչափութիւն», «Տաղերգութիւն», «Տեսիլ», «Տապանագիրք» և այլն։

«Տաղերգութիւնը» վառ երազանք է հայության անցած փառքի և կորցրած պետականության վերականգնման մասին։ Բանաստեղծը պատկերում է մի չքնաղ զորահանդես, «քաջալանջ, արի սաղավարտ ի գլուխ» աղեղնավորված հայ հերոսների, որոնք պատրաստ են ոչնչացնելու կեղեքիչների լուծը և ազատություն բերելու իրենց հայրենիքին։ Նրանց մեջ երևում է «անզոյգ Հայկ դյուցազնը», որ սպանելով Բելին, այժմ հրապարակ է իջել ղեկավարելու մարտը.

---

17 Նույն տեղում, էջ 39։
18 Նույն տեղում, էջ 36։

Հայկ է, բազմականք, մեր անզոյգ Պետ, Հայր, Բելայ գլխահար,
Հայկյան է ստուէրս, նորին կերպարան, պատկեր անվթար.
Ա՜խ, ուստի՞ եմուտ նա յայս տեսարան, յայս յարկ պերճափառ...
Ի թիկնաց վեհիս նազաքայլ ճեմեն Արամ մեծ անուն,
Զարմայր սաստ քաջաց, Պարոյր թագապերճ, Արայն քաջ, սիրուն,
Արտաշես աշխոյժ, Վազարշակ խոհեմ, Խոսրով քաջազուն...[19]

Հին քաջերի ոգին ոտքի է կանգնեցնում նորերին, պարսկական զավթիչների դեմ զենք բարձրացրած հայ զինվորներին, որոնց մարտի է կոչում Ներսես Աշտարակեցին։ Ալամդարյանը պատմությունը հիշում և գնահատում է ժամանակակցի հայացքով, չի ներանձնանում նրա մեջ, չի պարփակվում նրա շրջանակներում։ Նա հիշում է անցյալը, ոգևորվում նրա հերոսների սխրագործություններով, իբրև «օրվա մարդ»։ Նա պատմության գիրկն անցած դյուցազունների օրինակով ոգեշնչում է ժամանակակից հայ քաջերին, որոնք հերոսաբար մարտնչում են իրենց հայրենիքի թշնամիների դեմ և խուճապի մատնում նրանց։

Այս բանաստեղծությունը, որ Ալամդարյանը գրել է 1827 թ., ժամանակի ազգային-ազատագրական պայքարում նրա ռուսական կողմնորոշման արտահայտությունն է։ Բանաստեղծի նպատակն է եղել հայ քաջորդիների սխրագործություններով ոգեշնչել 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի մասնակից հայ մարտիկներին, պատերազմ, ուր վճռվում էր հայ ժողովրդի արևելյան հատվածի կյանքի ու մահու խնդիրը։

Նույն գաղափարի մարմնավորումն է նաև «Տեսիլ» բանաստեղծությունը։ Այստեղ ավելի պերճախոս են քնարական նրբագեղ զեղումների մեջ դրսևորված նրա հայրենասիրական, ազատասիրական գաղափարները։

Գիշերվա աղջամուղջին, անծանոթ դաշտի մեջ, բանաստեղծի երևակայության առաջ երկնքի մի կապույտ քողի տակ կուտակվում են սևաթույր ամպեր։ Զգայուն բանաստեղծի սիրտն ու միտքը երկյուղով է լցվում, կասկածանքները խլում են նրա հոգու անդորրը։ Նա դժվարությամբ առաջ է շարժվում դեպի նշմարելի լեռան կատարը։ Ընթացքը ծանր է, ճանապարհն անհարթ, և նրա ամեն մի քայլափոխի առաջ «խոչք և խութք ծնանին»։ Բայց մի ներքին ուժ, հովանավոր ձեռք պահում է բանաստեղծին, ոգի ներշնչում նրան և ապահով դուրս բերում մի լայնահուն պողոտա... Եվ բանաստեղծին երևում է երկնահաս Արարատը՝ Հայաստանի վերածննդի խորհրդանիշը... Նրա առջև բացվում է ահեղ մարտի տեսարան՝ բնության տարերք, հուժկու պայքար, շանթ ու որոտ, կայծակ, մրրկահույզ փոթորիկ, որից սասանում են լեռները, թալկանում աստղերը, համբառնում են երկինք և լույս ցոլում... բանաստեղծը սարսռում է երկնային այդ ահեղ տեսարանից, ահաբեկվում։ Մահվան սարսափը պատում է նրան, բայց ահա խաղաղվում է ամեն ինչ... Արարիչը հրամայում է տոնել Հայաստանի ազատությունը։

Հրամայէ. «Մերկասցի՛ քուրձ սգոյ Հայաստան,
Պճնեսցի՛ յիւր շքեղ ոսկեխայտ պատմուճան,
Լուսասցի՛ յարտասուաց դարաւոր տրտմութեան,

19 Նույն տեղում, էջ 19։

Խնկեսցի՛ հոտ յանոյշ երկնաբոյս կնդրկան։
Տո՛ւք նմա զքօղ կարմիր նախեղակ հարսնութեան,
Հնչեցէ՛ք յարարածս զերգ փառաց յաղթական.
Քարասիրտ, ոխերիմ, խորամանկ, անպիտան
Թշնամիք եղկելոյս առ ժամայն բերկրութեան՝
Պրկեսցին, ի կապանս անազատ գերութեան
Մատնեսցին չարաչար անվախճան նեղութեան[20]։

«Տեսիլը» Ալամդարյանի քաղաքական հայացքների բանաստեղծական դրսևորումն է և շատ կողմերով հիշեցնում է նրա ճառը հայ կամավորականների առաջ՝ արտասանված 1827 թ. մայիսին, որոնց նա գոտեպնդում էր ռուս-պարսկական պատերազմի շրջանում։

Ալամդարյանն իր քնարով արտացոլել է ժամանակի հայ մտավորականության առաջավոր շերտերի քաղաքական իղձերը, արձագանքել նրանց ազատասիրական պայքարին, հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական, իրավական վիճակից բխող հարցերին։ Այս առումով ուշագրավ է նաև «Մօր աղեկիզի ողբ քստմնելի ընդ մահ անդրանկի յօտար աշխարհի» բանաստեղծությունը, ուր նա կերտել է հայ պանդուխտի տառապյալ մոր կերպարը։ Այստեղ մենք լսում ենք մոր սրտակեզ մորմոքը պանդխտության մեջ տառապող որդու համար.

Փարիմ զքո ոտիւք, որդեակ նազելի,
Զոհ լիցին իմ կեանք քեզ, անգին որդի.
. . . . . .
Ընդ քո զի՛ս մեռո, կեցո զիմ հոգի։
Վա՜յ, քանի՜ դառն է մայրութիւն, որդի[21]։

Ալամդարյանի քնարերգությունն իր լեզվով (գրաբար) և ավանդական մտքերի ու կերպարների առկայությամբ առնչվում է միջնադարյան հայ քրնարերգությանը, իսկ հուզականությամբ և մանավանդ հարցերի ու երևույթների առաջադիմական ըմբռնումով՝ նոր ժամանակներին։

Ալամդարյանը բնության երգիչ չէ։ Բնությունը նրա ստեղծագործության մեջ մեծ տեղ չի գրավում, բայց առանձին դեպքերում նպաստում է նրա բանաստեղծությունների հուզական հագեցվածությանը։ Դրա լավագույն ապացույցը «Գարուն» բանաստեղծությունն է, գրված 1831 թվականի ապրիլին, հաղպատյան աքսորի դառնալից օրերին։ Վերազարթնող, փթթող գարնանային բնությունն իր ծաղկազարդ դաշտերով հակապատկերն է սիրելիից զրկված և թշնամիներից հալածված բանաստեղծի հոգեվիճակի, որն այդ հակադրությունից ավելի է մռայլվում.

Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,
Զիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ ածին[22]։

20 Նույն տեղում, էջ 22։
21 Նույն տեղում, էջ 52։
22 Նույն տեղում, էջ 33։

XIX դարասկզբի բանաստեղծության մեջ քնարական նուրբ ու քնքուշ և իմաստավորված խոսքը հազվադեպ էր։ Այն գերազանցապես նկարագրական, ներբողական բնույթ ուներ։ Ալամդարյանի արժանիքն այն է, որ նա բանաստեղծության մեջ բերեց հոգեբանություն, խոհականություն, զգացմունք, վառ պատկերների, համեմատությունների ու հակադրությունների միջոցով դրսևորեց մարդկային հոգու ելևէջները։

Ալամդարյանի քնարական բանաստեղծություններում իշխող տարրը քնարական հույզն է, զգացմունքայնությունը, նրա լեզուն, ոճն ու պատկերները նույնպես զգացմունքային են, հուզական։

Ալամդարյանը իր ստեղծագործությամբ հարստացրեց դարասկզբի բանաստեղծությունը, հատկապես էլեգիան, ստեղծելով միաժամանակ քնարա-դրամատիկական բանաստեղծության գերազանց նմուշներ։ «Ողբերգությունն Իսրայելի», «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» և այլ բանաստեղծությունները դրա պերճախոս ապացույցն են։

Ալամդարյանի քնարական հերոսը սիրող և տառապող մարդն է, որը ներկայացնում է բանաստեղծի հոգու տառապանքները, պատմում նրա ազգի ցավը, փորփրում վերքերը, բայց ստեղծում է ոչ միայն իր՝ տառապյալի կերպարը, այլ առհասարակ մարդ արարածի սիրո ողբերգությունը, համամարդկային սիրո ողբերգությունը։

XIX դարասկզբի հայ գրականության, այդ թվում նաև բանաստեղծության մեջ տիրապետող ուղղությունը կլասիցիզմն էր։ Ալամդարյանը, բնականաբար, չէր կարող տուրք չտալ այդ ուղղությանը։ Հայկական կլասիցիզմի հետ Ալամդարյանն առնչվում է գրաբար լեզվով, կրոնական թեմատիկայով և միջնադարյան հայ դասական պոեզիայի որոշ ժանրերի ու ձևերի օգտագործմամբ (ներբող, աղոթք, դիմառնություն)։ Սակայն կյանքն իր նոր երևույթներով, ապրած ու գործած միջավայրը, ուսումնառությունը, արևմտաեվրոպական և ռուսական ռոմանտիզմի ու սենտիմենտալիզմի ներկայացուցիչների (Բայրոն, Շելլի, Կարամզին, Բոգդանովիչ) ազդեցությունը իրենց որոշակի կնիքը դրին նրա գրական ճաշակի և գեղագիտական հայացքների վրա։

Ալամդարյանը հանդես եկավ անցման շրջանում, երբ կլասիցիզմին զուգահեռ զարգանում էին գրական նոր ուղղություններ։ Նա կանգնեց երկու ճանապարհների միջև։ Հնից սկսեց իր ընթացքը և հասավ նորին, դառնալով նոր գրական ուղղությունների՝ սենտիմենտալիզմի և ռոմանտիզմի ներկայացուցիչը մեր գրականության մեջ։

ПОЭЗИЯ АРУТЮНА АЛАМДАРЯНА

ЭЛЬМИРА ГЕВОРКЯН

Резюме

Аламдарян является первым крупным представителем лирической поэзии первого тридцатилетия XIX в. В лирике Аламдаряна с особенной глубиной прозвучали любовные мотивы. В любовных песнях Аламдаряна особое место занимают песни розы и соловья, которые являются свое-

образным отражением аллегорий розы и соловья в поэзии восточных народов. Мировоззрение Аламдаряна наиболее ярко проявилось в его патриотических стихотворениях.

Лирика Аламдаряна своим языком (грабар), наличием библейских образов связывается с армянской средневековой лирикой, а взволнованностью и, в особенности, передовым восприятием событий — с новым временем.

Аламдарян выступил в переходный период, когда параллельно с классицизмом развивались новые литературные направления. В своем творчестве он достиг нового, став представителем сентиментализма и романтизма в нашей литературе.